և այս կղզիս նստի փաշայ Օսմանցոց, և
24 զատ ի կղզոյն ոչինչ իշխանութիւն չունի։
Ի Մուսովու 12 օր գնացաք, ի Դիվարպաս.
այս 12 աւուր ճանապարհիս շատ կերպ գա-
զան կայ, եւս առաւել ֆիլ, քարքեարդան,
28 մէհմուն, առիւծ, որ շատ են քան զաւազ
ծովու։ Դոն և աղգ աղգ խօսուն թռչունք
դեղեցիկ փետրօք, և է մայրի և 'ի գիշերի
ոչ ոք կարէ գնալ և երկիրն ամենայն շէն
32 է և մարդալի, ի Դիվարպասու Հապաշի թա-
գաւորին վէզիրն վասն մեր արզ արաւ թա-
գաւորին, եղեւ հրաման գնալու. տեղէն 30
օր հասաք ի Դումպիա, որ է դախտ Հա-
36 պէշու թագաւորին. այս 30 աւուր ճանա-
պարհիս 15 աւուր ճանապարհն լեռնային է,
որ առաւօտէ մինչեւ երեկոյ լերան գլուխն
կելնէ. եւ երեկոյէն մինչեւ առաւօտն գլխոյն
40 կու իջանէ. մնայեալ 15 աւուր առաջին ա-
ւուր ճանապարհն լեռն մի կայ բարձր եւ
երկայն, որ մի կողմն հասել է 'ի ծովն, և մին
կողմն ի Բագինու երկիրն է. և այս լերան
44 այն երես անցանելն տաւար չէ կարող գլուխ
ելնել, թէ՛ բեռ, թէ՛ տաւար չուանով վեր
կու քաշեն։ Եւ 'ի լերան գլխէն մինչեւ ի
Դումպիա դաշտ է և լի շինութեամբ եւ
48 մարդով որ կարէ ասել մին քաղաք։ Իսկ
քաղաքն Դումպիոյ երկու չափ մեծ է քան
զՍտամպոլ առանց պարսպի, եւ թագաւո-